

## Գուրու

Արմինե Հակոբյան, «Գլոբալ Էս-Փի-Սի» գլխավոր տնօրեն



Վերջին շրջանում ամերիկյան ֆոնդային շուկան գտնվում է կոռեկցիայի վիճակում: Հիմնական ֆոնդային ինդեքսները հասել են նախորդ եռամսյա վաղեմության մակարդակին: Հավանաբար կոռեկցիան կշարունակվի եւս մի քանի շաբաթ: Արժեթղթերը վաճառած ներդրողները հաշվում են իրենց վնասները և գերծ են մտում հետագա ներդրումներից՝ լավագույն ժամանակների վերադարձի ակնկալիքով: Ոմանք ձեռք են բերում պետական պարտատոմսեր, իսկ ավելի խիզախները վերափոխում են իրենց ներդրումները այսպես կոչված պաշտպանված արժեթղթերի («defensive stocks») շուկայի տատանումների նկատմամբ ավելի քիչ զգայուն խոշոր և վստահելի ընկերությունների բաժնետոմսերի:

Անկայուն իրավիճակներում մարդիկ ավելի ընկալունակ են ուրիշների կարծիքին, հատկապես եթե այն հնչեցնում են ճանաչված հեղինակություններ: Ֆոնդային շուկայում չկա ավելի հեղինակավոր ներդրող, քան Berkshire Hathaway ընկերության հիմնադիր և ղեկավար Ուորեն Բաֆֆեթը: Վերջինիս տրված մարկդիրների շարքում ամենահանրաճանաչներն են՝ «Գուշակ Օմահայից» կամ ուղղակի «Գուրու»: Նրա ունեցվածքը երկրորդն է աշխարհում՝ Բիլ Գեյթսից հետո: Ընդ որում, Բաֆֆեթը միակն է ամենահարուստ մարդկանց շարքում ով աշխատել է իր միլիարդները բացառապես արժեթղթերի առթ ու վաճառքով: Այս գործունեությամբ նա զբաղվում է 1965 թվականից: Այդ ժամանակներում նրա ընկերությունում 10 հազար ԱՄՆ դոլար ներդրում կատարած յուրաքանչյուրը ներկայումս կստանար շահույթ 50 մլն ԱՄՆ դոլարի չափով: Իսկ նույն Berkshire Hathaway-ի մեկ բաժնետոմսի արժեքը նախորդ տարի հասավ 100 հազար ԱՄՆ դոլարի:

Պատասխանելով այն հարցին, թե որն է նրա հաջողակ լինելու գաղտնիքը, Բաֆֆեթը ասում է, որ նա ներդրումներ է կատարում միայն այն ընկերություններում, որոնց բիզնեսը իրեն հասկանալի է: «Ինչը կարող է լինել ավելի պարզ, քան Fruit&Loom բիզնեսը՝ տղամարդկանց շապիկներ և կիսավարտիք արտադրող ընկերությունը կամ Coca Cola-ն կամ Johnson&Johnson-ը»:

Ներկայումս նրա ներդրումային պորտֆելում առկա են 30 ընկերությունների բաժնետոմսեր: Եվ ամեն անգամ, երբ պորտֆելում հայտնվում է նոր անվանում կամ հակառակը՝ որևէ ընկերություն դուրս է մտնում նրանից, այդ դեպքը լայն քննարկում է ստանում շուկայում և մամուլում: Որպես կանոն Բաֆֆեթը չի մեկնաբանում իր ընթացիկ ներդրումային որոշումները: Սովորաբար տարին մեկ անգամ Berkshire Hathaway բաժնետերերի ընդհանուր ժողովին նա մանրամասն կիսվում է շուկայի մասին իր կարծիքով՝ մատնանշելով նոր ծագող զարգացումները, եւ պատասխանում է գումարները իրեն վստահած մարդկանց բազմաթիվ հարցերին:

Եթե դուք ուզում եք դառնալ Berkshire Hathaway բաժնետեր, սակայն չունեք 136 475 ԱՄՆ դոլար, ապա 4553 ԱՄՆ դոլարով (սա այս արժեթղթի նախորդ գինն է) կարող եք ձեռքբերել «B» կարգի մեկ բաժնետոմս: Հետագայում «B» կարգի 30 բաժնետոմս կարելի է վերափոխել «A» կարգի մեկ բաժնետոմսի:

Միեւնույն ժամանակ, ցանկացածը կարող է ծանոթանալ Գուրուի ներդրումային պորտֆելի հետ և հետևելով նրան, միջոցների առկայության դեպքում գնել և վաճառել նույն այն արժեթղթերը, որոնցով գործառնություններ է իրականացնում Ուորեն Բաֆֆեթը:

### Փոփոխություններ Գուրուի պորտֆելում.

Վերջին ամիսների ընթացքում Բաֆֆեթը բացել է երկու նոր դիրք: Դա ավտոկոմպոնենտներ արտադրող WABCO Holdings, Inc. ընկերությունն է և Ամերիկայում օգտագործած ավտոմեքենաների վաճառքի խոշորագույն ցանցը՝ CarMax Inc.: Սրանից բացի նա մեծացրել է դիրքերը Burlington Northern Santa Fe Corp. (երկաթգծեր), Dow Jones & Co. Inc. (ֆինանսական և բիզնես տեղեկատվություն), Johnson & Johnson (կոսմետիկա եւ հիգիենայի միջոցներ), US Bancorp եւ Wells Fargo & Company (բանկեր) ընկերությունների արժեթղթերում:

Բացի այդ Berkshire Hathaway ազատվեց First Data Corporation եւ Western Union Co. (դրամական փոխանցումների շուկայում աշխատող ընկերություններ) արժեթղթերից, ինչպես նաև Tyco International Ltd. բաժնետոմսերից (ահագանգման և հակահրդեհային համակարգերի բնագավառի տեխնոլոգիաներ):

